ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

17 ապրիլի 2014 թվականի N 28-Ա

ք. Հրազդան

Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի ապրիլի 10-ի N 171-Ա որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2014 թվականի ապրիլի 2-ի N 3 որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. *Լիլիթ Վարդանյանին* 2014 թվականի ապրիլի 17-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջրվեժի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ